ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՊ-ԳՀՇՁԲ-01/22

ք. Երևան «17» 01 2022 թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատը ի դեմս գլխավոր քարտուղար Հայկ Ավագյանի, որը գործում է ՀՀ հաշվեքննիչ պալատի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լուքսորիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Մխոյանի որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է **13 090 000** (տասներեք միլիոն ինսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ***փաստացի մատուցված ծառայությունների*** **հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքված լրացուցիչ համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:** Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հաշվեքննիչ պալատ	«Լուքսորիա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19	Ք.Երևան, Գ.Աղաբաբյան փ. 1/26
ՀՎՀՀ 00061508	Բանկ « Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011545069	Հ/Հ 1570076057750100
ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00244414
Հ.Ավագյան	Տ.Մխիթարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
« 17 » 01 2022թ. կնքված
ՀՊ-ԳՀՄՀԲ-01/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111170/501	Համաձայն Հավելված 1.1-ի	դրամ	13 090 000	1	Կատարողի տեխնիկական սպասարկման կայան	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու *դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից* 300 օրացուցային օր, բայց ոչ ավել քան 25.12.2022թ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ 900011545069
ՖՆ գործառնական վարչություն

Հ.Ավագյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Լուքսորիա» ՍՊԸ
Ք.Երևան, Գ.Աղաբաբյան փ. 1/26
Բանկ « Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570076057750100
ՀՎՀՀ 00244414

Տ.Մխոյան
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
«17» 01 2022 թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով պայմանագրի

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի համար սահմանված միավորի առավելագույն գին /ՀՀ դրամ/							
		Չ/Բ 1					
		Ավտոմեքենաների մակնիշները (տեսակները)					
N	SU-1,SU-2 ծառայությունների և SU-3 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	«Տոյոտա քեմրի» - 2 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը՝2.4լ,և 2,5լ, շարժիչի հզորությունը՝ 167 և 185 ձիաուժ, գույնը՝սև, արտադրության տարեթիվ՝ 2007թ. և 2018թ	«Տոյոտա կորոլլա»- 3 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը՝1.6լ, շարժիչի հզորությունը՝ 124 և 122 ձիաուժ, գույնը՝ սև, արտադրության տարեթիվ՝ 2008թ և .2017թ	«Նիսսան ալտիմա»- 1 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, շարժիչի հզորությունը՝ 182 ձիաուժ, գույնը՝սև, արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Նիսսան սենտրա» - 2 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը՝1.6լ, շարժիչի հզորությունը՝ 113 ձիաուժ, գույնը՝ մոխրաշականակագույն(1) և արծաթագումմետալիկ (2), արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Նիսսան X թրայիլ»- 1 մեքենա թափքը՝ թեթև մարդատար, շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, շարժիչի հզորությունը՝ 170 ձիաուժ, գույնը՝ սև, արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Հյունդայի»- 1 մեքենա թափքը՝ լաբորատոր միկրոավտոբուս, տիպարը H1, շարժիչի աշխատանքային ծավալը H1, շարժիչի հզորությունը՝ 110 ձիաուժ, գույնը՝ մոխրագույն մետալիկ, արտադրության տարեթիվ՝ 2009թ.,
1	2	3	4	5	6	7	8
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը							
1	Շարժիչի հանում տեղադրում	100000	100000	100000	100000	100000	100000
2	Շարժիչի վերականգնում	250000	250000	250000	250000	250000	250000
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	20000	20000	20000	20000	20000	20000
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	42000	42000	42000	42000	42000	42000
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	60000	60000	80000	60000	80000	80000
6	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	100000	100000	160000	100000	160000	100000
7	Շարժիչի գլխիկի վերանորոգում	100000	100000	160000	100000	160000	100000
8	Փականի խցուկի փոխարինում	100000	100000	160000	100000	160000	100000
9	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	100000	100000	160000	100000	160000	100000
10	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
11	Հրիչների փոխարինում DOHC	20000	20000	20000	20000	20000	20000
12	Ատամնավոր փոկի փոխարինում	[redacted]	[redacted]	35000	35000	[redacted]	[redacted]
13	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
14	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
15	Միջոցային օղակների փոխարինում	100000	100000	160000	100000	160000	100000
16	Թափանիվի հանում և տեղադրում	80000	80000	80000	80000	80000	80000
2. Ղեկավարման, սնմանելիությունմանհամակարգ							
17	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000

18	Յուղի պոմպի փոխարինում	23000	23000	23000	23000	23000	23000
19	Ղեկավարման բլոկի վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
20	Օդի զտիչի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000
21	Սրահի զտիչի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000
22	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	13000	13000	13000	13000	13000	13000
23	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	45000	45000	45000	45000	45000	45000
24	Վառելիքիմղիչի փոխարինում	28000	28000	28000	28000	28000	28000
25	Վառելիքի զտիչի փոխարինում	12000	12000	12000	12000	12000	12000
3. Մառեցման և արտածման համակարգ							
26	Հովհարի հանում և տեղադրում	24000	24000	24000	24000	24000	24000
27	կոնդիցիոների կոմպրեսորի փոխարինում	38000	38000	38000	38000	38000	38000
28	Ռադիատորի հանում և տեղադրում	38000	38000	38000	38000	38000	38000
29	Ռադիատորի վերանորոգում	88000	88000	88000	88000	88000	88000
30	Թերմոստատի փոխարինում	22000	22000	22000	22000	22000	22000
31	Ջրի պոմպի փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
32	Խլարարի հանում և տեղադրում	11000	11000	11000	11000	11000	11000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
33	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	140000	140000	140000	140000	140000	140000
35	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	160000	160000	160000	160000	160000	160000
36	ԱՓՏ-ի վերանորոգում	150000	150000	150000	150000	150000	150000
37	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	26000	26000	26000	26000	26000	26000
5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ							
38	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	[redacted]				45000	45000
39	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով					90000	90000
40	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում					90000	90000
41	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում					36000	36000
6.Առջևի և հետևի կամրջակներ							
42	Կիսաառանցքակալի փոխարինում	25000	25000	25000	25000	25000	25000
7. Կախոց							
43	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	25000	25000	25000	25000	25000	25000
44	Անվակուռդի առանցքակալի փոխարինում	28000	28000	28000	28000	28000	28000
45	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
46	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
47	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	25000	25000	25000	25000	25000	25000
48	Զսպանակի հանում և տեղադրում	25000	25000	25000	25000	25000	25000
49	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	25000	25000	25000	25000	25000	25000
50	մեղմիչի թասակի առանցքակալի փոխարինում	25000	25000	25000	25000	25000	25000
51	Ներքևի լծակի վռանների տեղադրում	28000	28000	28000	28000	28000	28000
52	Ներքևի լծակի վռանների փոխարինում	28000	28000	28000	28000	28000	28000
53	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	12000	12000	12000	12000	12000	12000
54	Գնդե հոդակապերի փոխարինում	21000	21000	21000	21000	21000	21000
55	Ծայրակալների հանում և տեղադրում	13000	13000	13000	13000	13000	13000

56	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	18000	18000	18000	18000	18000	18000
57	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
58	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
59	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	8000	8000	8000	8000	8000	8000
60	Հետևի զսպանակի փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000
61	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	24000	24000	24000	24000	24000	24000
62	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	18000	[redacted]	18000	[redacted]	18000	18000
63	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	48000	48000	48000	48000	48000	48000
64	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	8000	8000	8000	8000	8000	8000
65	Անվաթացքի կարգավորում	36000	36000	36000	36000	36000	36000
66	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2000	2000	2000	2000	2000	2000
8.Ղեկային մեխանիզմ							
67	Ղեկային կալունի հանում և տեղադրում	80000	80000	80000	80000	80000	80000
68	Ղեկային կալունի վերանորոգում	80000	80000	80000	80000	80000	80000
69	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	25000	22000	22000	24000	28000	20000
70	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	10000	7000	5000	5000	5000	5000
71	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	25000	22000	22000	24000	28000	20000
72	ղեկային մեղանիզի փոխարինում	80000	80000	80000	80000	80000	80000
9. Արգելակային համակարգ							
73	Գլխ.գլանի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
74	Արգելակային համակարգի օդահանում	7000	7000	7000	7000	7000	7000
75	Առջևի պահանգների հանում և տեղադրում	7000	7000	7000	7000	7000	7000
76	Հետևի պահանգների հանում և տեղադրում	7000	7000	7000	7000	7000	7000
77	Առջևի պահանգների վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
78	Հետևի պահանգների վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
79	Առջևի պահանգների ուղղորդիչի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000
80	Հետևի պահանգների ուղղորդիչի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000
81	Արգելակային փողրակի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000
82	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000
83	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000
84	Հետևի կոճղակների փոխարինում	[redacted]	[redacted]	10000	10000	[redacted]	[redacted]
85	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
86	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
87	Արգելակային սկավառակի հղկում	20000	20000	20000	20000	20000	20000
88	ABS-ի հանում և տեղադրում	22000	22000	22000	22000	22000	22000
89	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	22000	22000	22000	22000	22000	22000
10.Էլեկտրասարքավորում							
90	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10000	10000	10000	10000	10000	10000
91	Գեներատորի հանում և տեղադրում	35000	35000	35000	35000	35000	35000
92	Գեներատորի վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
93	Մեկնարկիչի հանում և տեղադրում	35000	35000	35000	35000	35000	35000
94	Մեկնարկիչի վերանորոգում	35000	35000	35000	35000	35000	35000
95	Առջևի լապտերի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
96	Հետևի լապտերի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
97	Բռնկման կոդպեքի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
98	Ազդանշանի հանում և տեղադրում	18000	18000	18000	18000	18000	18000
99	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	30000	30000	30000	30000	30000	30000

100	Էլեկտրական տվիչների փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
101	Ղեկի ժապավենի փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
102	Վառոցքի կոճի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
103	Վառոցքի մոմերի փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
104	Կոնդիցիոների լիցքավորում	35000	35000	35000	35000	35000	35000
105	Կոնդիցիոների վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
11. Այլ ծառայություններ							
106	Անիվի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000	2000
107	Անվադողի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000	5000
108	Անիվի բալանսավորում	5000	5000	5000	5000	5000	5000
109	Անիվի վալց	18000	18000	18000	18000	18000	18000
110	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	3000	3000	3000	3000	3000	3000
111	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	2000	2000	2000	2000	2000	2000
Ծառայություններ /գինը Ներառյալ ԱԱՀ-ն/		3569000	3542000	3923000	3589000	4151000	3835000
SU-1,SU-2 ծառայություններիևSU-2 ընթացքումօգտագործվողպահեստամասերիքսայուղերիևայլօժան դակկոյութերիհանվանումները							
	1. Շարժիչ						
1	Բարձիկ	110000	110000	110000	110000	110000	110000
2	Շարժիչի գլխակի միջադիր	55000	55000	55000	55000	55000	55000
3	Միջադիր	28000	28000	28000	28000	28000	28000
2.Ղեկավարման, սնմանկոդմանհամակարգ							
4	Յուղ շարժիչի C 1/4 15W40 հանքային [illegible] 1լիտր	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	5000
5	Յուղ շարժիչի SN/CF 10W40 կիսասինթետիկ, 1լիտր	6500	6500	6500	6500	6500	6500
6	Յուղ շարժիչի SN/CF 5W40 սինթետիկ, 1լիտր	8500	8500	8500	8500	8500	8500
7	Յուղի զտիչ	9000	9000	9000	9000	9000	9000
8	Վառոցքի մոմ	16000	16000	16000	16000	16000	16000
9	Վառոցքի կոճ	55000	55000	55000	55000	55000	55000
10	Վառելանյութի զտիչ	28000	28000	28000	28000	28000	28000
11	Օդի զտիչ	16000	16000	16000	16000	16000	16000
12	Ծնկաձև լիսեռի տվիչ	54000	54000	54000	54000	54000	54000
13	Թթվածնի տվիչ	65000	62000	62000	62000	75000	60000
3. Սառեցման և արտածման համակարգ							
14	Էլեկտրական հովհար	60000	60000	58000	58000	70000	49000
15	Ռադիատորի փողրակ	15000	15000	15000	15000	15000	15000
16	Թերմոստատ	20000	19000	19000	21000	22000	18000
17	Ջրի պոմպ	35000	32000	25000	25000	40000	25000
18	Փոկ	7000	7000	7000	7000	7000	7000
19	Սրսուի զտիչ	11000	10000	10000	10000	15000	10000
20	Անտոր (Խամուտ)	1500	1500	1500	1500	1500	1500
4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
21	ԱՓՏ-ի զտիչ	42000	42000	42000	42000	42000	42000
22	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	14000	14000	14000	14000	14000	14000
23	ԱՓՏ յուղ,սինթետիկ, 1լիտր	14000	14000	14000	14000	14000	14000

24	Հերմետիկ	5000	5000	5000	5000	5000	5000
5. Կախոց—подвеска- peredok							
25	Ձախ կամ աջ հոդակապ	120000	100000	120000	120000	100000	120000
26	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկոց	18000	18000	18000	18000	18000	18000
27	Անվակունդ	32000	32000	32000	32000	32000	32000
28	Անվակունդի խցուկ	8000	8000	8000	8000	12000	8000
29	Անվակունդի ներքին առանցքակալ	46000	46000	46000	46000	46000	46000
30	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	87000	87000	87000	87000	87000	87000
31	Ձախ կամ աջ հեդակապի խցուկ	14000	14000	14000	14000	14000	14000
32	Հարվածամեղմիչի թաթակ	46000	46000	46000	46000	46000	46000
33	Հարվածամեղմիչի թաթակի առանցքակալ	14000	14000	14000	14000	14000	14000
34	Առջևի հարվածամեղմիչ	96000	96000	96000	96000	96000	96000
35	Ներքևի լծակի վոան	18000	18000	18000	18000	18000	18000
36	Գնդե հոդակապ	18000	18000	18000	18000	18000	18000
37	Առջևի կայունարարի վոան	9000	9000	9000	9000	9000	9000
38	Առջևի կայունարարի կանգնակ	23000	23000	23000	23000	23000	23000
39	հետևի կայունարարի կանգնակ	23000	23000	23000	23000	23000	23000
40	Հետևի ցնցամեղմիչ	96000	96000	96000	96000	96000	96000
41	Աջ կամ ձախ ձգան	23000	23000	23000	23000	23000	23000
42	Ծայրակալ	23000	23000	23000	23000	23000	23000
6. Ղեկային մեխանիզմ							
43	Հիդրոուժեղարար	86000	79000	77000	86000	92000	74000
44	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	12000	12000	12000	12000	12000	12000
7.Արգելակային համակարգ							
45	Արգելակային փողրակ	9000	9000	9000	9000	9000	9000
46	Առջևի արգելակային կոճղակների հավաքածու	48000	48000	48000	48000	48000	48000
47	Հետևի սկավառակային կոճղակների հավաքածու	46000	46000	46000	46000	46000	46000
48	[redacted]	[redacted]	[redacted]	8000	8000	[redacted]	[redacted]
49	Առջևի արգելակային սկավառակ	73000	73000	73000	73000	73000	73000
50	Հետևի արգելակային սկավառակ	73000	73000	73000	73000	73000	73000
51	ABS-ի տվիչ	25000	25000	25000	25000	32000	25000
52	Արգելակային հեղուկ, DOT-3 - 500գրամ	8000	8000	8000	8000	8000	8000
53	Արգելակային հեղուկ, DOT-4 - 500գրամ	8000	8000	8000	8000	8000	8000
8. Էլեկտրաապրքավորում							
54	Գեներատորի դիոդային կամրջակ	45000	45000	45000	45000	45000	45000
55	Գեներատորի ռելե	45000	45000	45000	45000	45000	45000
56	Գեներատորի առանցքակալ	45000	45000	45000	45000	45000	45000
57	Գեներատորի խարիսխ	45000	45000	45000	45000	45000	45000
58	Գեներատորի առջևի իրան	32000	32000	32000	32000	32000	32000
59	Գեներատորի հետևի իրան	32000	32000	32000	32000	32000	32000
60	Գեներատորի փաթույթ	45000	45000	45000	45000	45000	45000
61	Գեներատորի փոկանիվ	26000	26000	25000	26000	30000	26000
62	Մեկնարկիչի ռելե	32000	32000	32000	32000	32000	32000
63	Մեկնարկիչի ածուխ	32000	32000	32000	32000	32000	32000
64	Բենդեքս	45000	45000	45000	45000	45000	45000
65	Մեկնարկիչի կցորդիչ (ավտոմատ)	45000	45000	45000	45000	45000	45000

66	Առջևի լապտերի լամպ	14000	14000	14000	14000	14000	14000
67	Հետևի լապտերի լամպ	14000	14000	14000	14000	14000	14000
68	Առջևի թարթիչի լապտերի լամպ	4000	4000	4000	4000	4000	4000
69	Հետևի թարթիչի լապտերի լամպ	4000	4000	4000	4000	4000	4000
70	Հակամշուշային լապտերի լամպ	14000	14000	14000	14000	14000	14000
71	Արգելակային լապտերի լամպ	4000	4000	4000	4000	4000	4000
72	Էլեկտրական տվիչ	18000	18000	18000	18000	18000	18000
73	Վառոցքի մոմի ծայրակալ	18000	18000	18000	18000	18000	18000
74	Ապակեմաքրիչի խոզանակներ	13000	13000	13000	13000	13000	13000
Ապրանքներ ԸՆԴԱՄԵՆԸ		2349500	2314500	2330500	2342500	2361500	2313500
ԸՆԴԱՄԵՆԸ որից՝		22.609.000					
Ծառայություններ		14.032.000					
Ապրանքներ /գինը ներառյալ ԱԱՀ-ն/		8.577.000					

1. Կատարողը պարտավոր է մինչև սպասարկումը, պատվիրատուի ուղարկած ավտոմեքենան զննել վարորդի ներկայությամբ և պատվիրատուին տրամադրել թերությունների ակտ՝ որում պետք է ֆիքսված լինեն ավտոմասերի և ծառայությունների գները(առանձին): Սպասարկման օրն ու ժամը՝ համաձայն երկողմ պայմանավորվածության:
2. Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի գրավոր հայտի (գրության) հիման վրա տրանսպորտային միջոցը կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասերի փոխարինման, իսկ պահեստամասերի փոխարինման դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
3. Ծառայության մատուցման ժամկետների խախտումները, անորակ սպասարկումը, ոչ ժամանակին պահեստամասերի տրամադրումը կհամարվի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարում, որը կարող է դառնալ կնքված պայմանագրի լուծման պատճառ:
4. Կատարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենան արտադրող ընկերության կողմից արտադրված պահեստամասեր և քսայուղեր: Սպասարկվող ավտոմեքենաներին տեղադրված պահեստամասերը պետք է ունենան առնվազն 6 ամսվա երաշխիք:Մեքենայի շարժիչների վերանոգման երաշխիքային ժամկերը՝ առնվազն 12 ամիս, փոխանցման տուփերի,կամրջակների և ղեկային կալունի վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 6 ամիս:
5. Տեխսպասարկման կայանը պետք է լինի Երևան քաղաքում՝ հետևյալ պայմաններով.
ա/ հագեցած լինի առնվազն 3 ամբարձիչներով՝ առնվազն երեք տոննա բարձրացնելու կարողությամբ և բոլոր ծառայությունների մատուցման հնարավորությամբ:
բ/ ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ մինչև 5 և ավելի ավտոմեքենայի համար:
գ/ ունենա նվազագույնը 3.5 տոննա բեռնատարողությամբ ավտոքարշակ, որը պահանջի դեպքում

- ք.Երևանում մեկ ժամվա ընթացքում, պետք է հասնի խափանված ավտոմեքենայի գտնվելու վայրը և անվճար տեղափոխի վերանորոգման կայան:
- իսկ մայրաքաղքից դուրս՝ առնվազն 6 ժամվա ընթացքում խափանված մեքենան տեղափոխել վերանորոգման կայան: Ընդ որում տեղափոխման արժեքը չի կարող գերազանցել 1 կմ-ի համար 700 դրամը:

դ/ ունենա բոլոր ծառայությունների մատուցման համար որակյալ մասնագետներ:
6.Ծառայությունների մատուցման վերոնշյալ պայմանների չապահովման դեպքում կատարողը պարտավոր է գրավոր կամ բանավոր տեղեկացնել պատվիրատուին՝ նշելով պատճառները և դրանց մատուցման ստույգ ժամկետ(ներ)ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19

ՀՎՀՀ 00061508

ՀՎՀ 900011545069

ԴՆ գանձապահական վարչություն

Հ.Ավագյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Լուքսորիա» ՍՊԸ

Ք.Երևան, Գ.Մեսրոպյան փ. 1/26

«Մեքենաշինակ» ՓԲԸ

15700760657150100

00240416

Ս.Մխոյան

(ստորագրություն)

M.S

Հավելված 2
« 17 » 01 2022թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 2.1
« 17 » 01 2022 թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն